ԿՐՈՆԱԿԳԻՏԱԿԱՆ

ՎԱՀԵ ՍԱՅԱԴՅԱՆ

ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Սույն հոդվածի նպատակը կրոնական կազմակերպությունների իրավունքների եւ պարտականությունների կատարման ընդացքում առաջ եկած խնդիրները վեր հանելն է: Կրոնական կազմակերպությունների իրավունքների օրինական սահմանափակումների նպատակը միտված է այն հիմնահարցերին, որոնք կարգավորում եւ ապահովում են կրոնական կազմակերպությունների գործունեության օրինականությունը եւ վերահսկելի դարձնում համապատասխան ոլորտը:

Ստորեւ մեկնաբանվում են ազգային եկեղեցու եւ մյուս կրոնական կազմակերպությունների իրավունքների, պարտականությունների շրջանակները կրոնական եւ իրավական դաշտում: Անդրադառնալով կրոնական կազմակերպությունների իրավունքներին, որոնք սահմանված են համապատասխան ոլորտը կարգավորող օրենսդրությամբ, կփորձենք ներկայացնել կրոնական կազմակերպությունների իրավունքների եւ պարտականությունների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված տարբերությունները, ինչպես նաեւ դերը եւ առաքելությունը պետության եւ հասարակության կյանքում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 26-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունք: Կրոնի եւ համոզմունքների արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար[1]: Այս հոդվածը վերաբերում էր նաեւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն, սակայն այն ոչնչով չէր տարբերվում խորհրդային օրենքի համանման հոդվածից:

«Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն վերաբերող հոդվածը» Սահմանադրության մեջ չընդգրկելու առաջնային պատճառներից մեկը զուցե այն էր, որ դեռ նոր անկախություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետությունը կառուցողական գործողություններ

1 Տես «ՀՀ սահմանադրություն», 2005 թ., հոդված 26, էջ 7:

չէր կարող կատարել այդ բնագավառում: Փաստորեն, սույն օրենքն ընդունվել է 1991-ի սեպտեմբերի 21-ից, այսինքն՝ անկախությունից առաջ, 1991-ի հունիսի 17-ին՝ հիմք ունենալով «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ԽՍՀՄ օրենքը, որը 1990թ. հոկտեմբերի 1-ին ստորագրել էր ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովը: Իսկ նույն օրը Ա. Լուկյանովի ստորագրած «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի որոշման» 2-րդ կետով հանձնարարված էր միութենական հանրապետությունների Գերագույն խորհուրդներին իրենց օրենսդրությունը համապատասխանեցնել սույն օրենքին: Հայաստանի Գերագույն Խորհուրդը, օրենքը տեղայնացնելով, լրջորեն խմբագրելով, կրճատումներ եւ հավելումներ (մասնավորապես 17-րդ հոդվածում) անելով, 1991թ. հունիսի 17-ին ընդունեց ՀՀ «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը, որից հետո այն երկու անգամ՝ 1997թ. սեպտեմբերի 19-ին եւ 2001թ. ապրիլի 25-ին փոփոխվեց եւ լրացվեց: Եւ միայն 2005 թ. նոյեմբերի 27-ին ընդունված Սահմանադրությամբ ըստ արժանվույն գնահատվեց Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելությունը:

ՀՀ Սահմանադրության 8.1 հոդվածը սահմանում է՝ «Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից: Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում:

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը: Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով[2]»:

Դատմության եւ մշակույթի հուշարձան հանդիսացող մի շարք վանքերի եւ եկեղեցիների պահպանությունն ու հետագա օգտագործումն ապահովելու նպատակով եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է հետագա անհատույց օգտագործման իրավունքը հանձնել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն[3]: Այս հոդվածը բավական հստակ է ձեւակերպում եկեղեցու եւ պետության փոխհարաբերությունները:

Եկեղեցուն տրված պետական վերոնշյալ տարբեր եւ նմանատիպ արտոնություններ կարելի է հանդիպել մի շարք երկրների Սահմանադրություններում[4], օրինակ՝ Իտալիայում Եկեղեցին պաշտոնապես բաժանված է պետությունից, պետությունն իր հարաբերությունները Կաթոլիկ Եկեղեցու հետ կարգավորում է հատուկ համաձայնագրերի ու օրենքների միջոցով: Ըստ Իտալիայի Սահմանադրության 8-րդ հոդվածի՝ երկրի բոլոր

2 Տե՛ս անդ, էջ 3:

3 Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն վանքեր եւ եկեղեցիներ անհատույց՝ սեփականության իրավունքով հանձնելու մասին ՀՀ օրենք: 17 հուլիսի, 2000թ. ՀՀ կառավարության N 403 որոշումներ:

4 Տե՛ս «Религия и СМИ», Справочно-информационный портал, «Русский журнал» 20.01.04г.

կրոնները բաժանվում են երկու կարգավիճակի՝ կաթոլիկ, որի հետ պետությունը համաձայնագիր է կնքում, եւ ոչ կաթոլիկ: Ոչ կաթոլիկ դավանանքներն իրավունք ունեն համաձայն իրենց կանոնադրությունների սեփական կազմակերպությունները ստեղծել, քանի դեռ նրանք չեն հակասում իտալական իրավական կարգին, իսկ նրանց հարաբերությունները պետության հետ սահմանվում են օրենքով: Բուլղարիայի Սահմանադրության համաձայն հատուկ կարգավիճակ է շնորհվում՝ Բուլղարիայի Օրթոդոքս եկեղեցուն: Պետության եւ Օրթոդոքս եկեղեցու միջեւ կանոնակարգում Սահմադրական այս արտոնությունները առիթ են ընձեռում հետեւյալ ասպարեզներում՝ կրոնական գիտելիքների ապահովումը դպրոցներում, բուհական համակարգում աստվածաբանական ֆակուլտետի առկայությունը, հոգեւոր հոգատարությունը զինված ուժերում եւ բուհերում, հարկային օրենսգրքում եկեղեցական հարկերի առկայությունը: Նորվեգիայի Սահմանադրության 2-րդ հոդվածում սահմանված է, որ Ավետարանական Լյութերական եկեղեցին համարվում է Նորվեգիայի պաշտոնական պետական կրոնը: Նորվեգիայի Եկեղեցու կառավարման բոլոր ծախսերը հոգում են պետությունը եւ քաղաքային իշխանությունները՝ պետական հարկերի հաշվին: Համաձայն բնագավառը կարգավորող օրենքի՝ Նորվեգիայի պետական մանկապարտեզները եւ դպրոցները պարտավոր են բոլոր աշակերտներին դասավանդել «բարոյականություն եւ քրիստոնեական դաստիեարակություն» առարկան: Միայն Նորվեգիայի եկեղեցու քահանաներն են հրավիրվում մասնակցելու պետական ծառայության ու ժողովրդական տոներին, միջոցառումներին: Հետեւապես միջազգային իրավունքի տեսանկյունից պետական աջակցության մակարդակը տարբեր կրոնական միավորումներին տարբեր է, որն իր մեջ պարունակում է պետությունների կողմից խղճի ազատության ապահովման բավականաչափ նորմեր: Հասկանալի է, որ այստեղ չկա ոչ մի անօրինականություն: Հետեւապես օրենքի առջեւ կրոնական կազմակերպությունների հավասարության սկզբունքը չի նշանակում տառացի հավասարեցում նրանց աջակցելու ոլորտում եւ չի երաշխավորում արտոնությունների ինքնաբերաբար ընձեռում, այլ լոկ ընձեռում է խտրականությունը բացառելու պետության պարտականությունը:

ՀՀ օրենքը «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ընդունվել է ՀՀ Գերագույն Խորհրդի կողմից 1991 թ. հունիսի 17-ին: Փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել ՀՀ Ազգային ժողովում 1997 թ. սեպտեմբերի 19-ին եւ 2001 թ. ապրիլի 25-ին: Ընդհանուր առմամբ օրենքի նախագիծը վերցված է Միացյալ Ազգերի Կազամակերպության Գլխավոր ասամբլեայի՝ 1948 թ. դեկտեմբերի 10-ին հրապարակած համանուն հռչակագրից: Մեջբերենք հռչակագրի 18-րդ. հոդվածը. «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու կրոնի ազատության իրավունք, այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը եւ միանձնյա կամ այլոց հետ համատեղ եւ հրապարակավ կամ մասնավոր կարգով կրոնը կամ համոզմունքը քարոզելու, արարողությունների, պաշտամունքի եւ ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն»: Հայաստանի Հանրապետությունն այս օրենքի նախաբանում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ճանաչում է որպես հայ ժողովրդի Ազգային Եկեղեցի:

Օրենքի միայն առաջին բաժինն է անմիջապես վերաբերում խղճի եւ կրոնի ազատությանը, իսկ մյուս բաժինները՝ կրոնական կազմակերպություններին: Առաջին բաժինը ներկայացնում է ընդհանուր դրույթներ՝ կապված օրենքի կիրառության հետ: Նշված է, որ ՀՀ քաղաքացիներն ունեն խղճի, մտքի եւ դավանանքի ազատության իրավունք, անկախ իրենց կրոնական պատկանելությունից, հավասարապես պարտավորվում են պահել ՀՀ օրենքները, եւ որ քաղաքացու նկատմամբ չի թույլատրվում որեւէ հարկադրանք կամ բռնություն՝ կրոնական ծիսակատարություններում եւ արարողություններում, կրոնի ուսուցմանը մասնակցելու կամ չմասնակցելու հարցերի նկատմամբ իր վերաբերմունքը որոշելիս[5]:

Այս հոդվածներն իրապես շատ կարեւոր են ցանկացած ժողովրդավարական երկրի, այդ թվում նաեւ՝ Հայաստանի համար: Օրենքի երկրորդ բաժինը սահմանում է կրոնական կազմակերպությունների ձեւավորման եւ գրանցման հետեւյալ պահանջները՝ հիմնվել պատմականորեն կանոնագրված որեւէ սրբազան բնագրի վրա, իր դավանանքով մտնել համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի մեջ, զերծ մնալ նյութապաշտությունից եւ ուղղված լինել դեպի զուտ հոգեւոր ոլորտները, ընդգրկել առնվազն 200 հավատացյալ անդամ, կրոնական կազմակերպությանը չանդամագրել մինչեւ 18 տարեկան երեխաներին՝ անկախ կրոնական ծեսերին իրենց մասնակցելու պարագայից եւ այլ հանգամանքներից[6]: Անդրադառնանք նաեւ ՀՀ ԱԺ 1997թ. սեպտեմբերի 10-ին ընդունած «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքին, ըստ որի գրանցման համար նախկին 50 հավատացյալի փոխարեն պահանջվում է 200 անդամի առկայություն: Այսինքն, եթե համայնքն ունի 100 կամ 150 անդամ, ապա այն հռչակվում է օրենքից դուրս : ԽՍՀՄ-ի օրոք՝ մինչեւ 1990թ., երբ աթեիզմը պետական քաղաքականության մաս էր, կրոնական կազմակերպությանը գրանցման համար անհրաժեշտ էր ընդամենը 20, իսկ 1990թ.՝ 10 անդամի ստորագրություն: Հավելենք, որ Ռուսաստանի Դաշնությունում 1997թ. սեպտեմբերի 19-ին ընդունված «Խղճի ազատության եւ կրոնական միավորումների մասին» օրենքում գրանցման համար նախատեսված է ընդամենը 10 անդամի առկայություն:

Առայժմ Հայաստանի Հանրապետությունը չունի կրոնական սրբազան բնագրերի ու համաշխարհային ժամանակակից կրոնական համայնքների վերաբերյալ հստակ սահմանում, որը կպարզաբանի, թե կրոնական կազմակերպություններից որոնք կարող են պետականորեն գրանցվել, որոնք՝ ոչ: Մինչդեռ նույն բաժնի 6-րդ հոդվածում օրենքը սահմանում է, որ Ազգային Եկեղեցին եւ կրոնական կազմակերպությունները պետք է գործեն ըստ իրենց կանոնադրության: Նոր կանոնադրության ստեղծումը կամ եղածի նորացումը միանշանակ հստակություն կմտցնի Ազգային Եկեղեցու եւ պետության արդի հարաբերություններում: Ի տարբերություն կրոնական մյուս կազմակերպություննե-

5 Տե՛ս ՀՀ օրենքը «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին», Երեւան, 2001, հոդվ. 1,2,3:

6 Տե՛ս անդ, հոդ. 5:

րի, որոնք հիվանդանոցներում, ազատազրկման վայրերում եւ զորամասերում[7] կարող են գործել միայն այն պարագաներում, եթե այդ վայրերում կան իրենց կազմակերպության ներկայացուցիչներ: Եւ միայն այդ դեպքում կարող են պահանջել, որ իրենց կազմակերպության հովիվները կրոնական ծես կատարեն: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ունի լիազորություն նշյալ բոլոր հաստատություններում ունենալու իր մշտական սպասավորը[8]:

Ըստ խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի 6-րդ գլխի 17-րդ հոդվածի Հայաստանում եկեղեցին անջատ է պետությունից: Ընդ որում, ո՛չ եկեղեցին եւ ո՛չ էլ պետությունն իրավունք չունեն միջամտելու միմյանց ներքին գործերին: Միայն նշվում է, որ անկախ նրանից, թե որեւէ եկեղեցական շինություն պատկանում է եկեղեցուն, եթե այն պատմական հուշարձան է, ապա պետության կողմից անմիջական հոգածության եւ վերահսկողության տակ է[9]:

Պետությունը չի խոչընդոտում Ազգային Եկեղեցու մենաշնորհ հանդիսացող հետեւյալ առաքելությունների իրագործմանը՝ ազատ քարոզել եւ տարածել դավանանքը ՀՀ ողջ տարածքում, ինչպես նաեւ հայաշատ պետություններում, գործնականորեն աջակցել հայ ժողովրդի բարոյական կատարելագործմանը եւ հոգեւոր դաստիարակմանը: «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի հաջորդ պարբերությունը Ազգային Եկեղեցու մենաշնորհ է ճանաչում բարեգործական եւ բարեխնամ գործունեություն ծավալելը: Սակայն հարկ է նշել, որ որեւէ երկրում բարեգործությունը մենաշնորհ չի եղել եւ չէր կարող լինել: Բացի այդ, այս «մենաշնորհը» հակասում է հենց նույն օրենքի 7-րդ հոդվածի «ժ» կետին, որը ուղղակիորեն նշում է, որ կրոնական կազմակերպություններն իրավունք ունեն «զբաղվել բարեգործությամբ»:

Հայտնի է, որ Հայաստանում գրանցված եւ գործող տասնյակ բարեգործական կազմակերպությունները նաեւ հասարակական կազմակերպությունները, անհատները, սփյուռքահայերը ծավալում են բարեգործական գործունեություն: Սակայն նրանց համարել օրինախախտներ՝ սխալ կլինի:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանաբանության պաշտոնական լուսաբանումը զանգվածային լրատվության միջոցներով իրականացվում է միայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հավանության դեպքում: Հայ Առաքելական Եկեղեցին ՀՀ տարածքից դուրս գտնվում է ՀՀ պաշտպանության ներքո՝ ՀՀ օրենսդրության եւ միջազգային իրավական նորմերին համապատասխան: Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին օրենքի եզրափակիչ՝ 23-րդ հոդվածում ասվում է, որ պետությունը կրոնական կազմակերպությունների հետ իր փոխհարաբերությունները կարգավորում է հատուկ հանձնաժողովի միջոցով, որը գործում է կառավարությանն առընթեր: Այս օրենքում առկա են մի շարք խնդիրներ՝ ՀՀ տարածքում գործող

7 Հոգեւորականների՝ ազգային բանակում ծառայելու գերագույն նպատակը զինված ուժերի անձնակազմին քրիստոնեական-բարոյական սկզբունքներով եւ ազգային հայրենասիրական ոգով դաստիարակելն է:

8 Տե՛ս ՀՀ օրենքը «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին ». հոդվ. 7 գ.:

9 Տե՛ս անդ:

կրոնական կազմակերպություններին արտոնություններ տալու վերաբերյալ, սակայն Ազգային Եկեղեցուն իրավական առումով ավելի շատ արտոնություններ կան տրված:

ՀՀ կառավարությունն ամեն տարի ուսումը շարունակելու համար պարտադիր զորակոչից տարկետում է տալիս Սուրբ Էջմիածնի հոգեւոր-կրթական երկու հաստատությունների՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Վազգենյան դպրանոցի սաներին, ինչպես նաեւ հայաստանցի այն զինակոչիկներին, որոնք սովորում են Երուսաղեմի հայոց պատրիարքության ընծայարանում ու Կալկաթայի մարդասիրական ճեմարանում: Ընդորում, այս տարկետումը չի տրվում ընդհանուր՝ կառավարության հաստատած ցանկում ընդգրկված պետական բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցերեկային ուսուցման ուսանողներին տրված տարկետման հատուկ կարգով՝ «Զինապարտության անցնելու մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի եւ ՀՀ կառավարության 1992 թ. N 493 որոշմամբ»[10]: Առանձին դեպքերում միայն ՀՀ կառավարությունը Հայոց Եկեղեցու կուսակրոն հոգեւորականներին ընդհանրապես ազատում է պարտադիր զինվորական ծառայությունից[11]: Այլընտրանքային ծառայության մասին ՀՀ օրենքն ընդունվել է 2003 թ. դեկտեմբերի 17-ին եւ ընդհանուր առմամբ կիրառվում է այն զինակոչիկների նկատմամբ, որոնք իրենց կրոնական կամ այլ համոզմունքներից ելնելով, հրաժարվում են պարտադիր զինվորական ծառայության անցած զինակոչիկների պես զենք կրել, այն պահպանել եւ օգտագործել: Այս օրենքը, եթե նայենք մարդու իրավունքների տեսանկյունից, կարելի է կիրառել, եւ պարզապես անընդունելի է որեւէ կրոնական կազմակերպության որեւէ հավատացյալի, որի համոզմունքներին դեմ է զենք կրելը, ստիպողաբար զենք կցելը եւ պարտադիր զինծառայության անցած զինվորների հետ մեկտեղ ծառայություն սահմանելը:

ԱՄՆ սենատը 2012թ. հուլիսի 30-ի իր զեկույցում հրապարակել է կրոնական կազմակերպությունների գործունեությանը ճնշող պետությունների ցանկը, որում ընդգրկված է նաեւ Հայաստանի Հանրապետությունը: Զեկույցում նշվում է, որ Հայաստանում առկա կրոնական կազմակերպություններին, մասնավորապես Եհովայի վկաներին, պարտադիր զինորական ծառայությունից հրաժարվելու համար դատապարտել են 2-3 տարի ազատազրկման, մինչդեռ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը երաշխավորում է կրոնական կազմակերպությունների ազատությունը:

ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը: Իսկ ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածում ասվում է, որ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջեւ: Զինապարտության մասին ՀՀ օրենքը եւս հռչակում է, որ զինապարտությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու քաղաքացիների սահմադրական պարտականությունն է[12]:

---

10 «Զինապարտության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 1998 թ. սեպտեմբերի 16-ին:

11 ՀՀ կառավարության 03.07. 2000 թ. համար 348 որոշում:

12 ՀՀ օրենքը Զինապարտության մասին, գլուխ 1, հոդված 3: Ընդունվել է 1998թ. սեպտեմբերի 16-ին ԱԺ կողմից:

Ի պատասխան ԱՄՆ Սենատի զեկույցին, մեջբերում ենք խղճի ազատության, կրոնական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքները, որոնք երաշխավորում են քաղաքացու եւ կրոնական կազմակերպությունների ազատությունները, եւ որոնց ազատ գործունեությունները գտնվում են պետության հոգածության ներքո: Պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարվելու համար Եհովայի վկաներին դատապարտելն ունի մի շարք հիմնավոր իրավական պատճառներ:

Ինչպես արդեն նշեցինք, համաձայն ՀՀ Սահմանադրության, յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է մասնակցելու ՀՀ պաշտպանությանը: Հետեւապես Եհովայի վկաների՝ զինվորական ծառայությունից հրաժարվելը, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրենց հավատքին դեմ է զենք վերցնելը, հակասում է ՀՀ Սահմանադրությանը: Ինչպես նաեւ խաթարում է պետության սահմանների անվտանգությունը, թուլացնում է մարտունակությունը եւ, ի վերջո, հանդիսանում է պառակտիչ հզոր գործոն: Իսկ այլընտրանքային ծառայության մասին ՀՀ օրենքը ամրագրում է, որ այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու եւ օգտագործելու հետ՝ ծառայությունն իրականացնելով ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում[13]:

Եհովայի վկաներին դատապարտելու փաստերը, որ հնչեցվում են տարբեր բարձր ատյաններում, այնքան էլ չեն համապատասխանում իրականությանը, ասածի ապացույցն է այն, որ Եհովայի վկաները մինչեւ դատապարտվելը՝ զինվորական ծառայությունից հրաժարվելու պատճառով, ունեն վերը նշված այլընտրանքային ծառայության հնարավորությունը օրենքով սահմանված կարգով: Թեպետ ավելի քան ակնհայտ է, որ վերջիններս հրաժարվում են նաեւ այլընտրանքային ծառայությունից՝ նախընտրելով դատապարտվել:

ԱՄՆ դեպարտամենտը վերոնշյալ զեկույցում արձանագրում է նաեւ, որ Հայաստանի Հանրապետության բնակչության 90%-ը Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդներն են, իսկ մնացածը կազմում են մյուս կրոնական կազմակերպությունները[14]: Հայաստանի Հանրապետությունում կրոնի ազատության իրավունքները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ եւ ՀՀ օրենսդրությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը իրավական սահմանափակումներ չի կիրառում կրոնական կազմակերպությունների ազատության, մասնավորապես պաշտպանվածության, ազատ տեղաշարժման իրավունքների նկատմամբ, եթե նրանց գործողությունների մեջ հակահիրավական տարբեր չկան: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում կրոնական կազմակերպությունների ազատությունները գտնվում են պետության հոգածության ներքո:

Հայաստանի Հանրապետությունում չի ոտնահարվում մարդու մտքի, խղճի, դավա-

---

13 Այլընտրանքային ծառայության մասին ՀՀ օրենք, գլուխ 1, հոդված 2, ընդունվել է 2003 թ. դեկտեմբերի 17-ին:

14 Տե՛ս ARMENIA DIGES. Церковь и религия.Республиканская партия Армении нарушает религиозные свободы. 02 августа 2012 .

նանքի ազատության իրավունքը, որը ամրագրված է նաեւ մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում[15]: Նշենք նաեւ, որ հասարակության գերակշռող մասը եւ Հայաստանի Հանրապետությունը, ըստ արժանավույն է գնահատում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու նշանակությունը եւ դերը՝ մշտապես հենվելով պետության աջակցության վրա[16]:

Թեեւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին դասվում է կրոնական կազմակերպությունների շարքը, այնուամենայնիվ, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավական առումով ունի առավելություններ, քան մյուս կրոնական կազմակերպությունները: Այդ ամենն, ինչ խոսք, միտված է հայ ազգի հոգեւոր դաստիարակության ապահովմանն ու ամրապնդմանը:

Առավել չմանրամասնելով «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի բացթողումները, նշենք, որ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան ՀՀ ԱԺ-ում 2002 թ. մարտի 20-ին վավերացնելուց հետո անհրաժեշտ է միջազգային իրավունքի փորձը հաշվի առնելով՝ նախապատրաստել նոր օրենքի նախագիծ, որն, անշուշտ, գերծ կլինի հիշյալ հակասություններից: Հարկ է, որ նոր օրենքում որոշակիորեն հստակեցվեն նաեւ այնպիսի տերմիններ ու հասկացություններ, ինչպիսիք են խիղճը, ազատ քարոզելը, ժողովրդի հոգեւոր կրթությունը, հոգեւոր կենտրոնը եւ այլն, որպեսզի ՀՀ օրենքը խուսափի իրարամերժ հակասություններից:

15 Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 10.12.1948թ., հոդված 18:

16 2012թ. նոյեմբերի 3-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, մասնակցելով թեմական ներկայացուցչական ժողովին, ի հստակեցումն ասվածի, նշել է, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին կարող է ակնկալել հայոց պետականության համակողմանի աջակցությունը: